Գետաշէնի ժողովրդի
ԴԻՄՈՒՄԸ
Հայաստանի
Գերագոյն Խորհրդին,
Նախարարների
Խորհրդին

Հ.Յ.Դ.-Մ.Տ.Կ.-Խորհրդային բանակի ուղղաթիռները ահաբեկիչ թռիչքներ կատարելուց յետոյ ուղղաթիռներից աւտոմատային կրակահերթեն տուել, եւ հրթիռներով խփել են Գետաշէնին՝ վնասուել է գիւղի ծայրամասում գտնուող պահակակէտի տներից մէկը: Ուղղաթիռի վայրէջքից յետոյ աւտոմատային եւ գնդացրային կրակահերթեն սկսուել Ղուշչի Արմաւիր գիւղի կողմից: Ղուշչի Արմաւիրում է գտնուում խորհրդային բանակի մէկ գումարտակ. բանակի վկայութեամբ կրակողները ՕՄՕՆականներն էին՝ բանակը կանգնած էր ՕՄՕՆի կողքին:

Գետաշէնում զինուորականների հետ հանդիպելուց յետոյ, մեզ համար պարզ դարձաւ, որ զօրքը տեղաբաշխուած լինելով ադրբեջանական գիւղերում, ոչ մի քայլ չի ձեռնարկում ՕՄՕՆի կողմից կատարուող ոտնձգութիւնների դէմ: Փաստօրէն բանակը Գետաշէնի ենթաշրջանում նոյն դերն է կատարում, ինչ որ ամբողջ Ղարաբաղի տարածքում:

Խորհրդային բանակի միաւորումները, որոնք կոչուած էին խաղաղութիւն ապահովելու, թոյլ են տալիս, որ ադրբեջանական ՕՄՕՆականները գնդակոծեն հայկական գիւղերը:

Հայաստանի Գերագոյն Խորհրդին եւ Նախարարների Խորհրդին խնդրում է շտապ միջոցներ ձեռնարկել գիւղերի ազգաբնակչութեան անվտանգութիւնը ապահովելու համար:

24.04.91թ.
ԳԵՏԱՇԷՆ